«Կրթություն առանց սահմանի»- ՀԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սովորողների քննադատական մտածողության զարգացումը մայրենիի ուսուցման գործընթացում

Ուսուցիչ՝ Վալյա Գևորգյան

Ղեկավար՝ Վ. Բաբաջանյան

Գևորգ Վարդանյանի անվան հ. 192 հիմնական դպրոց

Երևան -2023 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Քննադատական մտածողության անհրաժեշտությունը դպրոցում

ԽԻԿ համակարգի փուլերը

Քննադատական մտածողության զարգացումը մայրենիի ուսուցման գործընթացում

Եզրակացություն

Օգտագործված գրականության ցանկ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Քննադատական մտածողությունն իրենից ներկայացնում է տեղեկատվությունը վերաիմաստավորելու և ձևավորելու բարդ գործընթաց, որը կատարվում է գաղափարներն ու միջոցները ստեղծագործաբար համադրելու միջոցով: Դրա կիրառումը հնարավոր է բոլոր տարիքներում: Երբեմն կարծիք է հնչում, որ միայն ավագ դպրոցի աշակերտները կարող են ներգրավվել այդ գործընթացում: Սա բավականին սխալ պատկերացում է: Կրտսեր դպրոցի երեխաները ևս պատրաստակամորեն են մասնակցում բարդ խնդիրների լուծում պահանջող առաջադրանքների կատարմանը և ընդունակ են դրսևորել որոշումներ կայացնելու կարողության բարդ մակարդակ: Չէ՞ որ գիտելիքն արժեքավոր է, երբ այն կիրառելի է և ընկալված է հիմնավորապես: Ապագան պատկանում է նրանց, ովքեր կկարողանան տեղեկատվությունը քննադատաբար վերլուծել և կերտել սեփական ճշմարտությունը:

Քննադատական մտածողությունը ինքնուրույն մտածողություն է: Քննադատորեն մտածող մարդն առանց քննարկելու, բանավիճելու այնքան էլ հաճախ չի կիսում մեկ ուրիշի տեսակետը: Նա կարողանում է մտածել և ինքնուրույն, ազատ ու անկաշկանդ արտահայտել իր կարծիքները:

Քննադական մտածողությունը մտավոր բարդ գործընթաց է, 2-4-րդ դասարանում սովորողների համար , որ սկսվում է տեղեկատվությամբ և ավարտվում որոշում կայացնելով:

Նպատակ՝

Նոր մեթոդներով, հնարներով սովորողների առջև դուռ բացել, որ հիմնավորեն իրենց քննադատությունը և համամիտ չլինեն ընկերոջ հետ:

Հասնեն իրենց մտքերի պարզաբանմանը և կապեն այդ խնդիրը կյանքի հետ:

Գրական ակնարկ

Քննադատական մտածողության անհրաժեշտությունը դպրոցում

Այսօր Հայաստանի կրթական բարեփոխումներով շահագրգիռ մանկավարժները լուրջ որոնումների մեջ են: Դրանք հիմնականում նպատակաուղղված են դասավանդման արդյունավետությունը բարձրացնող նոր մեթոդների, հնարների, եղանակների հայտնագործմանը և գործնականում կիրառելու խնդիրներին: Համաշխարհային մանկավարժության մեջ արդեն կան որոշակի նվաճումներ, որոնք հասանելի են նաև հայ ուսուցչին և հաջողությամբ կարող են գործադրվել մեզանում: Նման նորարական մեթոդների և գործելակերպի մի համակարգ է Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով /ՔՄԶԿԳՄ/ ծրագիրը:

Այս ծրագրի նպատակն է՝ կրթել և դաստիարակել արժանավոր քաղաքացիներ՝ այսինքն՝ գործունյա, քննադատաբար մտածող անհատներ, որոնք ի զորու են լինելու ճիշտ կողմնորոշվել ժամանակակից կյանքի ամենաբարդ իրավիճակներում, ազատ ու անկաշկանդ հայտնել սեփական կարծիքները, ուշադիր ու հանդուրժող լինել այլոց կարծիքների հանդեպ և վստահաբար ստանձնել որոշումներ կայացնելու պատասխանատվությունը:

ՔՄԶԿԳՄ ծրագրի համակարգն իրենից ներկայացնում է ուսուցման գործընթացի երեք փուլերից բաղկացած մի մոդել: Դա մտածողության ընթացք՝, ուր աշակերտները ներգրավված են դեռևս նյութը սովորելուց առաջ / խթանում /, նյութը սովորելու ընթացքում / իմաստի ընկալում /, նյութը սովորելուց հետո / կշռադատում/: Համակարգը կարճ անվանում են ԽԻԿ: Այն մեզ որոշ չափով հիշեցնում է ավանդական դասի կառուցվածքը / նախապատրաստական զրույց, նոր դասի հաղորդում, ամփոփում/:

ԽԻԿ/ խթանում, իմաստի ընկալում, կշռադատում/ համակարգի փուլերը.

1. ԽԻԿ համակարգի առաջին փուլը խթանումն է: Այս փուլի նպատակն է՝

խթանել աշակերտների հետաքրքրությունը և ցանկությունը՝ նոր նյութը հետազոտելու

ոլորտում, դրդում է աշխույժ հետաքրքրությամբ վերհիշել ուսուցանվող թեմայի շուրջ իրենց ունեցած ամբողջ տեղեկատվությունը: Սկսում են խորհել բուն թեմայի մասին, հարցեր տալիս դրա վերաբերյալ: Այս կերպ աշակերտները կարողանում են լայն ու կայուն հիմք պատրաստել՝ նոր տեղեկատվությունն ընդունելու և այն հիմնավորապես յուրացնելու համար: Ի տարբերություն ավանդականի՝ այստեղ ամենագործուն դերը աշակերտինն՝, իսկ ուսուցիչն ուղղորդողի դերում է:

Բերենք խթանման փուլի մեկ օրինակ / Տեսնես՝ լա՞վ է, թե՞ վատ/:

/Գիտամեթոդական հանդես նախաշավիղ **2. 2001, 2. 2006, 5-6. 2004/**

Մինչ նոր դասանյութին ծանոթանալը, ուսուցիչն առաջարկում է երեխաներին՝ մտքերի տարափով թվարկել այն ամենը, ինչ գիտեն կամ կարծում են, թե գիտեն թեմայի մասին՝ առանց մտահոգվելու դրանց ճիշտ կամ սխալ լինելու իրողությամբ: Երեխաները պետք է մեկ բառով արտահայտեն, թե մարդկանց, որ արարքներն են լավ, որը՝ վատ, որ արարքներն են գովելի,որը՝ պարսավելի:

Կարելի է գրատախտակին գծել Т-աձև աղյուսակ, որի սյունակում գրել<< Լավ է>>, իսկ մյուս սյունակում << Վատ է>> բառերը:

Սովորողները մտագրոհով արտահայտում են իրենց մտքերը լավ և վատ երևույթների մասին, որոնք գրանցվում են համապատասխան սյունակներում :

Այնուհետև յուրաքանչյուր գրվածի շուրջ տարվում է քննարկում և մտքերի փոխանակում: Այս ընթացքում ի հայտ են գալիս նաև անհամաձայնություններ:

Ուսուցիչն երբեմն-երբեմն հարցեր է տալիս, թե՝ արդյո՞ք

բոլորն են համաձայն առաջարկված մտքին և եթե այո կամ ոչ՝ ինչու՞: Յուրաքանչյուր պատասխանից առաջ ուսուցիչն աշակերտին մտածելու ժամանակ է տրամադրում, պատասխանելիս խրախուսում արտահայտած ինքնուրույն կարծիքները:

Մտքերի տարափ մեթոդի նպատակն է խթանել աշակերտների հետաքրքրքսիրությունը նոր նյութի նկատմամբ, վեր հանել թեմայի վերաբերյալ իրենց ունեցած

տեղեկությունները: Արտահայտված տարբեր կարծիքներն ու գիտելիքները նպաստավոր պայմաններ են ստեղծում աշակերտների հետաքրքրասիրությունն ու ուշադրությունը կենտրոնացած պահելու համար: Կարող են առաջանալ նորանոր հարցեր, որոնք նույնպես կխթանեն աշակերտներին կենտրոնացած պահելու համար: Օրինակ՝

- Իսկ դուք ի՞նչ լավ արարքներ եք կատարել:
- Ի՞նչ զգացումներ, հույզեր եք ունեցել այդ ժամանակ:
- Եղե՞լ է դեպք, երբ դուք վատ արարք եք կատարել:
- Ի՞նչ հույզեր եք ունեցել այդ ժամանակ և այլն:

Այնուհետև աշխատանք նկարագրման շուրջ:

Ուշադիր դիտե՛ք նկարագրումը:

- Ի՞նչ եք կարծում, ովքե՞ր են լինելու այս թեմատիկ խմբում ուսումնասիրվող տեքստերի հերոսները, և ինչի՞ մասին է լինելու այդ տեքստերի բովանդակությունը:

Այս փուլում էական գործոն է այն, որ ուսուցիչը հնարավորինս քիչ է խոսում՝ ասպարեզը տրամադրելով աշակերտներին:

2. Երկրորդ փուլը կոչվում է իմաստի ընկալման փուլ: Այս փուլում սովորողները հաղորդակցվում են նոր տեղեկատվության և նոր գաղափարների:

Ամենակարևորն այստեղ խթանման փուլում ձեռք բերված աշակերտների ներգրավման աստիճանի և հետաքրքրության պահպանման կարողությունն է: Բացի այդ՝ աշակերտները վերահսկում են իրենց ընկալումը, փորձում նոր ստացված տեղեկատվությունը հարմարեցնել իրենց մտքում արդեն առկա իմացություններին: Կան մեթոդներ, որոնց օգնությամբ կարելի է աշակերտների հետաքրքրասիրությունը կայուն պահել:

Մինչև տեքստի ընթերցումը

Կանխագուշակում, նպատակադրում

Տեքստի բովանդակության կանխագուշակում:

Կարելի է աշխատանքը կազմակերպել հետևյալ կերպ.

Ուսուցիչը համակարգչով ցուցադրում է նկարներ՝ ձմեռային տեսարան, երեխաները խաղում են բակում, ճնճղուկները շարվել են ծառի ձյունապատ ճյուղերին, ձյան վրա կոտրված պարսատիկ: Առաջարկվում է երեք րոպեի ընթացքում հորինել պատմություն նկարների հիման վրա::

Տեքստի լուռ ընթերցում՝ առաջադրանքով:

Դանդաղ, ուշադիր, լուռ ընթերցել տեքստը:.

Զրույց տեքստի բովանդակության շուրջ՝ նախնական ընկալումը պարզելու նպատակով:

- Հաստատվեցի՞ն ձեր կատարած կանխատեսումները տեքստի բովանդակության վերաբերյալ:

Տեքստի բարձրաձայն ընթերցում ամբողջական հատվածներով:

Ընթերցվում է մեկնաբանություններով :

Իրականացվում է նաև բառաբացատրական աշխատանք (անծանոթ բառերի իմաստների ճշգրտում և բացատրություն.**ճեղք, աղվամազ, աղաղակ, պսպղալ**):

Կարելի է տեքստը բաժանել երկու հատվածի, կարդալ հատված առ հատված: Յուրաքանչյուր հատվածից հետո առաջադրել հարցեր.

1 հատված՝ մինչև << Լևոնը շարունակում էր իր պարսատիկով հալածել նրանց>>:

Ուղղորդող հարցեր.

- Ինչո՞վ էր զբաղված Լևոնը:
- Զոնիկը ինչու՞ էր տխրում և Լևոնից խնդրում պարսատիկը:
- Ինչո՞վ էր առաջարկում փոխարինել պարսատիկը Զոնիկը:
- Ի՞նչ էր պատասխանում Լևոնը:

2հատված՝ մինչև վերջ:

Ուղղորդող հարց.

- Զոնիկին ինչպե՞ս հաջողվեց փրկել ճնճղուկներն:
- Ի՞նչ արեց Զոնիկը պարսատիկը:

- Ի՞նչ դաս առավ Լևոնը Զոնիկի վերաբերմունքից:

Ընթերցման ընթացքում կարելի է առաջադրել.

- Աղաղակ բառը տեքստում ո՞ր բառով կփոխարինեիր:
  Ինչպե՞ս կբացատրեք պսպղալ բառի իմաստը և ի՞նչը կարող է պսպղալ՞
  Գտեք աղվամազ բառի բացատրությունը:

Զրույց տեքստի բովանդակության շուրջ՝ վերլուծություններ և եզրահանգումներ կատարելու նպատակով առաջարկվող հարցեր:

- Ինչպիսի՞ն էր Զոնիկը:
- Ինչպիսի՞ն էր Լևոնը:
- Ի՞նչ կարելի է ասել Լևոնի բնավորության մասին:
- Տեքստի ո՞ր տողերն են օգնում պատասխանել այս հարցին:
- Կա՞ պատմվածքում այնպիսի մի բան, որը ձեզ զարմացրեց կամ ստիպեց մտածել:
- Ի՞նչ հույզեր ունեցաք:

Աշխատանք ընթերցողական կարողությունների զարգացման շուրջ

Ընթերցանությունը գնահատելու համար նախապես սովորողների կողմից մշակվում են չափանիշներ, որոնք սանդղակով ներկայացնում են գրատախտակին կամ պաստառների վրա:

Սանդղակի վերին ձողին նշել այն խմբի անունը, որը արտահայտիչ կկարդա տեքստը:

- Յուրաքանչյուր խմբին հանձնարարվում է սովորել արտահայտիչ ընթերցել պատմվածքը(խմբում կարող են ընդգրկվել 4-ական աշակերտներ) :
- Խմբերը ընթերցում են բնագիրը: Աշակերտներն ուսուցչի հետ միասին ընտրում են ամենաարտահայտիչ ընթերցող խմբին և հիմնավորում ընտրությունը: Աշակերտները հայտնում են իրենց կարծիքները:

- Աշխատանք լեզվական նյութի շուրջ

Խաղ՝ Կռահիր հերոսին

Ուսուցիչն ասում է տեքստի հերոսներին վերագրվող հատկանիշ ցույց տվող բառեր, սովորողները կռահում են, թե որ հերոսի ասին է խոսքը և գրում հաապատասխան բառակապակցություն:

Փոքրիկ, փետրավոր, անօգնական …… (ճնճղուկ)

Նրբանկատ, կենդանասեր, բարի …….. (Զոնիկ)

Անխիղճ……. (Լևոն)

Ի՞նչ եք կարծում, ի՞նչ ընդհանրություն կա թվարկած բառերի միջև, և ո՞ր հարցին են պատասխանում այդ բառերը: Ու դրանք հատկանիշ ցույց տվող բառեր են:

- Իսկ դու կարո՞ղ ես քո մասին ասել.

Ես չեմ չարչարում կենդանիներին:

Ես օգնում եմ փոքրերին ու տկարներն:

Ֆիզդադար:

- Ինքնուրույն աշխատանք:

Ճանաչի՛ր և շարունակի՛ր.

- Դասագրքում զետեղված լեզվական առաջադրանքների կատարում:

Աշակերտները յուրաքանչյուր շարքում ավելացնում են ևս չորսական բառ:

Ջ բաղաձայնի գրությունն ու արտասանությունը բացատրելուց հետո նյութի ամրապնդման նպատակով կազմակերպում է խաղ.

գրատախտակին է փակցնում բառեր , որոնց մեջ բաց թողնված է ջ տառը: Առաջարկու է աշակերտնեին բառերը բաժանել երկու խմբի՝ բառեր, որոնցում գրվում և արտասանվում է ջ և բառեր, որոնցում գրվում է ջ, բաըց արտասանվում չ: Միևնույն ժամանակ բառի մեջ լրացնում են ջ տառը և կարդում բառը:

Կշռադատում.

- Ուսուցիչը կազմակերպում է խաղ « Այսօր ի՞նչ սովորեցիր »:

Յուրաքանչյուր շարքից մեկ աշակերտ պատմում է մայրիկին, թե այդ օրը ինչ նոր բան է սովորել մայրենիից: Մոր դերը կատարում է ուսուցիչը: Պատմող աշակերտին լրացումներ

կարող են անել նույն շարքում նստած աշակերտները:

Անդրադարձ տեքստի բովանդակությանը և ամփոփում

Անդրադարձ իրականացնելու տարբերակներ

- Նկարագրիր , թե ինչպիսինը կլինի Լևոնը հաջորդ ձմռանը::
- Ինչպե՞ս կվարվեիր դու Ջոնիկի փոխարեն:

Ուսուցչի մասնագիտական-մանկավարժական մակարդակն արդեն համարժեք արձագանք է գտնում աշակերտների վերաբերմունքի մեջ, երբ սովորողներն իրենք արդեն ուսուցման ընթացքում դրսևորվում են որպես հավասարազոր որոնողներ ու կշռադատողներ:

Ուսուցման այս եղանակների ներդրումը նպատակ ունի ապահովելու աշակերտների աշխարհընկալման ինքնուրույնությունը, զարգացնելու նրանց տրամաբանական մտածողությունը և ստեղծագործական երևակայությունը:

/Գիտամեթոդական հանդես նախաշավիղ **2. 2001, 2. 2006, 5-6. 2004/**

Քննադատական մտածողության զարգացումը մայրենիի ուսուցման գործընթացում

Դասավանդման ընթացքում կիրառելով քննադատական մտածողության զարգացմանը նպաստող մեթոդներ ու հնարներ՝ համոզվել ենք, որ մեր փոքրահասակ սաներն էլ կարող են սովորել քննադատաբար մտածել, լինել իրենց ուսումնառության ակտիվ դերակատարները, համագործակցել իրենց դասընկերների հետ: Աշակերտները դառնում են ակտիվ սովորող, մտածող և ստեղծագործող անհատներ: Արդունավետ քննադատական մտածողություն դրսևորելու համար նրանք պետք է.

Զարգացնեն իրենց ինքնավստահությունը և հասկանան, որ իրենց կարծիքներն ու մտքերն արժեքավոր են,

Ակտիվորեն մասնակցեն ուսումնական գործընթացին,

Հարգանքով լսեն բազմազան կարծիքներ,

Պատրաստ լինեն և ձևակերպել, և հարկ եղած դեպքում նաև կասեցնել սեփական դատողությունները:

Յուրաքանչյուր առարկայի ծրագրով նախատեսված գիտելիքների ուսուցումը չի կարող երբեք իր մեջ ընդգրկել այն բոլոր գիտելիքներն ու հասկացությունները, որոնք երեխան պետք է ստանա այդ ուսումնական առարկայից: Ծրագրում տրվածը միայն այն հիմնականն է, որ անհրաժեշտ է տվլալ առարկայից ընդհանուր գաղափար տալու համար, իսկ մնացածը երեխաներն իրենք պետք է ինքնուրույն կերպով ստանան շրջապատից ու գրքերից:

Այսինքն, յուրաքանչյուր ուսուցչի գերխնդիրն է սովորել սովորեցնելը:

Ասվածի ապացույցն է գրական ունկնդրման դասաժամերի կազմակերպումը: Առաջին դասարանի երկրորդ կիսամյակում աշակերտներն աստիճանաբար սովորում են առանց ուրիշի օգնության կարդալ անծանոթ գիրքը, գտնել վերնագիրը, հեղինակի անունը, դիտել նկարազարդումները և դրանց հիման վրա որոշել գրքի թեման: Գրական ունկնդրման դասաժամը կազմակերպելիս պետք է նկատառել սովորողների պատրաստվածության մակարդակը, ծնողների սոցիալական վիճակը, դասարանի և

դպրոցի գրադարանի ֆոնդը, երեխաների հետաքրքրությունների շրջանակը: Այս ամենը հաշվի առնելով՝ ընթերցանության ստեղծագործությունների ընտրությունը պետք է կատարվի հետևյալ պայմանների առկայությամբ.

1. Բնագիրը պետք է լինի ծավալով փոքր՝ պարզ, մատչելի, թեման հոգեհարազատ, գաղափարը՝ հասկանալի:
2. Ինքնուրույն ընթերցանության համար ընտրված գրքերը գեղարվեստական ձևավորմամբ պետք է լինեն այնպիսին, որ երեխաները հետաքրքրվեն նկարազարդումներով, հրճվեն հերոսների նկարներով:

Ինքնուրույն ընթերցանություն կազմակերպելիս պետք է կրտսեր դպրոցականների մեջ սերմանել ընթերցասիրություն, զարգացնել գեղարվեստական ստեղծագործության գաղափարը հասկանալու, եզրահանգումներ, ընդհանրացումներ անելու կարողություններ: Նպաստել նրանց մեջ անձնային բարձրարժեք որակների զարգացմանը, գրագետ ընթերցողի, կարդալու պահանջմունք ունեցող քաղաքացու դաստիարակմանը:

Հաճախ ենք հանդիպում աշակերտների, որոնք նոր են կարդացել ու շատ քիչ բան են հասկացել: Վատ ընկալունակությունը բացատրվում է պարզ պատճառով, պարզապես ուշադիր չեն կարդում: Նրանք չգիտեն ինչպես կարդան, որ կենտրոնանան հիմնական մտքերի վրա: Ուսուցիչներս տիրապետելով քննադատական մտածողության զարգացմանը նպաստող մեթոդներին ու հնարներին՝ կարող ենք օգնել աշակերտներին՝ խորհել կարդացածի մասին:

/ Քննադատական մտածողության տեսության զարգացումը կրտսեր դպրոցում,Ծրագրեր և նյութեր, Երևան-2002/

Փորձարարական դասի պլան 1

Առարկա՝ Մայրենի
ԴԱՍԱՐԱՆ՝ 2-րդ
Դասի տիպ՝ Խառը
Թեմա՝ Պարահանդես անտառում

Դասի նպատակները և խնդիրները՝

1.Տեղեկություն ձեռք բերել տերևի, տերևաթափի, աշնանը բնորոշ փոփոխությունների մասին

2. Սահուն և վարժ ընթերցել բնագիրը՝ պահպանելով կարդալու որակական հատկանիշները

3.Ստեղծագործաբար վերարտադրել բանաստեղծությունը

4.Երկու նյութերի բովանդակության համեմատական նկարագրության միջոցով կարողանալ եզրահանգումներ կատարել

5.Կատարել լեզվաքերականական, բառակազմական աշխատանք

6. Ճիշտ գրել գ-ք , ղ-խ ուղղագրությանը պատկանող մի շարք բառեր

7. Ուսուցանել ոսկեզօծ բառի կազմությունն ու ուղղագրությունը

8. Ուսուցանել նույնարմատ բառերի կազմությունը (արթուն, արթնանալ, զարթնել)

Կիրառվող մեթոդներ՝

<<Զրույցի>> մեթոդ, <<Մտագրոհ>>, <<Գուշակություն՝ ըստ բառերի և բառակապակցությունների>>

Անհրաժեշտ պարագաներ՝

Պրոյեկտոր, համակարգիչ, կպչուն թղթեր

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔ

Խթանման փուլ

Այս փուլի ընթացքում կատարվում է տնային աշխատանքի ստուգում և նախորդ թեմայի հարցում, այն է՝ Հ. Թումանյանի <<Տերևաթափ >> բանաստեղծության համառոտ

բնութագրում:

Կրկնել անցած լեզվական նյութերը (առարկա, գործողություն, հատկանիշ ցույց տվող բառերը, բառակապակցությունները, բառերի տեսակներն ըստ կազմության, նախադասության տեսակները և նախ. գլխավոր անդամները, հեքիաթի առանձնահատկությունները:

Այնուհետև ներկայացնել անցնելիք դասանյութից մի քանի բանալի բառեր և բառակապակցություններ և առաջադրել աշակերտներին մտածելու, թե ինչի մասին կարելի է պատմել այդ բառերիօգնությամբ: Վերջում որոշել, թե այդ բառերից ո՞րը կարող է դառնալ պատմության վերնագիր (բառակազմորեն վերլուծել վերնագիրը):

Այնուհետև՝ հարց ու պատասխանի միջոցով նկարագրել աշնան ամիսները, ներկայացնել աշնանը բնորոշ փոփոխությունները: Տեսասահիկով տեղեկությունհաղորդել տերևի տեսակների ու ձևերի մասին, ցուցադրել տերևաթափը:

Իմաստի ընկալում

Ընթերցել <<Պարահանդես անտառում>> հեքիաթը շարունակելով, կատարել մտքերի փոխանակություն և համեմատել <<Տերևաթափը>> բանաստեղծության հետ:

Ֆիզդաղար

Դուրս գրել ուղղագրական արժեք ներկայացնող բառերը, կատարել անծանոթ բառերի բացատրություն: Այնուհետև՝ <<Մտագրոհ>> մեթոդով բնութագրել տերևը:

Կշռադատման փուլ

Ուսուցիչը երեխաներին է բաժանում թղթեր և առաջարկում պատկերել տերևաթափ անտառում՝ ունկնդրելով աշնան մասին երգը: https://www.youtube.com/watch?v=tkWkXkGgz-Q

- Ստեղծագործաբար ներկայացնել բնության փոփոխություններ ըստ եղանակների
- Թվարկել պտղատու ծառեր և դրանց պտուղները
- Թվարկել ոչ պտղատու ծառեր
- Ամրապնդել գ-ք ուղղագրության իրենց իմացած բառերը

Փորձարարական դասի պլան 2
ԴԱՍԱՐԱՆ՝ 1-ին
Առարկա՝ Մայրենի

Դասի թեմա՝ « Ի » հնչյուն-տառի ուսուցում

Չափորոշիչ

- Կիմանան տառանունը, կկարողանան տարբերել տառը և հնչյունը
- Կկարողանան վանկատել բառերը, կտարբերեն միավանկ և բազմավանկ բառերը
- Կկարողանան լսել, հասկանալ և ճիշտ վերարտադրել հնչող խոսքը
- Կկարողանան իրավիճակին համապատասխան ոչ ծավալուն բանավոր տեքստ կազմել

Դասի նպատակը

- Ուսուցանել «Ի» հնչյուն-տառը
- Հյուսել պատմություն թեմատիկ նկարի շուրջ

- Ամրապնդել պատմություն-նախադասություն-բառ-վանկ-հնչյուն-տառ շղթան
- Հարստացնել բառապաշարը նկարելուկների միջոցով
- Ամրապնդել բառի հնչյունային վերլուծությունը:

Դասի խնդիրները

- Սովորել նոր բառերի բացատրությունը
- Կազմել կայուն կապակցություններ
- Ամրապնդել պատմություն-տառ շղթան

Դասից հետո աշակերտները կիմանան

- Կարդալ ու գրել «Ի» հնչյուն-տառը

- Տրամաբանական հաջորդականությամբ վերարտադրել նկարի բովանդակությունը
- Գործնականում կիրառել բառակապակցության գիտելիքները
- Նկարագրել, բնութագրել կերպարները

Կահավորանքը՝ տառապատկերներ, պաստառներ, քարտեր, պրոյեկտոր, էկրան, մրգեր և բանջարեղեն՝ զամբյուղներով, աշնան տերևներ, մեծ մատիտներ, դիմակներ, Ի-ի մեծադիր տառապատկեր, աշակերտների ձեռք պատկերող թղթեր

Մեթոդները՝ մտագրոհ, հարց և պատասխան, կռահի՛ր, խաղային,դերային

Դասի ընթացքը՝

Խթանում

1. Ողջույնի խոսքեր
2. Հարցեր և պատասխաններ

3.Ամփոփելով, ասել,որ այսօր հոկտեմբերի 12-ն է, աշնանային գեղեցիկ օր։

4. Կրկնել անցածը՝ պատմություն-նախադասություն-բառ-վանկ-հնչյուն շղթան։

5. Ֆիզկուլտդադար

6. Իմաստի ընկալում

7. Ցուցադրել Ի տառը և ասել, որ այսօր սովորելու են Ի հնչյուն – տառը, որ տառերը լինում են մեծատառ և փոքրատառ։

8. Կրկնել ձայնավորները։

9. Ի տառով բառեր կազմել

10. Ցուցադրել նկար-պատմությունը։ Աշակերտները պատմում են նկարը։

11. Գտնել գրքի և պաստառի նկարների տարբերությունը։

10. Դասագրքի նկարելուկները ցուցադրել սահիկներով։ «Իրիկուն» ոտանավորը ներկայացնել մեծ մատիտներով։

11. Տառի գրությունը։ Աշակերտների ձեռք-թղթերը՝ տառերով, փակցնել մեծադիր տառապատկերին։

Կշռադատում

12.Ամփոփել, «Ի տառի երգը» https://youtu.be/YQ5zM6crm9Q

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, քննադատական մտածողությունը նպաստում է երեխաների ազատ, անկաշկանդ խոսք ձևավորելուն: Եթե նույն պատմվածքը ընթերցում են բոլորը և քննարկում, ապա այդպիսի ընթերցանությունը կմիավորի երեխաներին և նրանց մեջ կզարգանա համագործակցային և հաղորդակցական հմտություններ: Քննադատական մտածողության համակարգը ուսուցման և ուսումնառության երեք փուլերից բաղկացած մի մոդել է: Մոդելը նկարագրում է ճանաչողական մի գործընթաց, ուր աշակերտները պետք է ներգրավվեն մինչև նյութը սովորելը / խթանում /, նյութը սովորելու ընթացքում / իմաստավորում / և նյութը սովորելուց հետո / կշռադատում /___ԽԻԿ համակարգ:

ԽԻԿ համակարգը որոշ չափով մեզ հիշեցնում է ծանոթ ավանդական դասի կառուցվածքը՝ նախապատրաստական փուլ / խթանում /, նոր դասի հաղորդման փուլ / իմաստավորում / և ամփոփման փուլ / կշռադատում /:

Աշխատանքումս ներկայացրել եմ բազում վարժություններ, որոնք միտված են զարգացնելու սովորողների ինքնաճանաչողության, լեզվական, սովորել սովորելու կարողունակությունը, թվային և մեդիակարողունակությունը, մշակույթային, տնտեսական , ժողովրդական, մաթեմատիկական կարողունակությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Քննադատական մտածողության տեսության զարգացումը կրտսեր դպրոցում, Ծրագրեր և նյութեր, Երևան-2002

2. Գիտամեթոդական հանդես նախաշավիղ 2. 2001, 2. 2006, 5-6. 2004

3. 3.Դավիթ Գյուրջինյան, Նարինե Հեքեքյան , Երևան 2020

4. https://youtu.be/YQ5zM6crm9Q

5. https://www.youtube.com/watch?v=tkWkXkGgz-Q